

միայն հրեհց պատերազմի պատմութիւնից, Ինձ  
թուռում է՝ թէ այդ խնդիրները վերջնականապէս  
լուծել է պ. Կարգելը,

Խորինացու «Հայոց պատմութեան» կնճռոտ  
խնդրի լուծման անսայթաբելի եղանակն անշուշտ  
այս ձևով մանրակրկիտ քննութիւնն է, որի ըն-  
թացքում սակայն հեռու պիտի լինիք կանխակալ  
կարծիքներից և աւելի ուշք պիտի դարձնենք Խո-  
րենացու հոետորական ուղղութեան վրայ. Ինձ  
թուռում է՝ թէ Խորենացուն հասկանալու միակ  
միջոցը Նրա «Պիտոյից զբիի» լուրջ ուսումնասիրու-  
թիւնն է, այսինքն այն ուղին, որ արդէն ցոյց է  
տուել յարգելի գիտնական պ. Բառումդարտնելը.

### Ե. Քարամեան

ԳՈՐԾՔ ՍԹԱՔԸՆՈՅՑ. — Աշխատ. Սահակ քա-  
հանայ Սահակեանց. Տիփիս. 1896. — Այս աշխա-  
տասիրութեամբ Արժ. Սահակ քահանան մի Գ.  
Հատոր ևս աւելացնում է իւր Հին և Առ  
ու Խտի Սրբազնութեան պատմութեան ձեռ-  
նարկների վերայ, որոնք արդէն քաջ յայտնի են և  
գրաւել են իւրեանց արժանապայել տեղը մեր ՀԱՊ-  
րոցական գրականութեան մէջ. Թէկ մեր տեսակե-  
տով բացարձակ և աններելի մի սխալ է հեղինակի  
ընդունած այն կարծիքը (թող վկայէ այդ մասին ով  
կուզէ), «որ եթէ Պօղոս չէր եղել՝ քրիստոնէու-  
թիւնը հրէութեան մէջ կուլ կը գնար»: «Պօղոսն էր  
միայն, որ ձիգդ էր հասկացել Փրկչի երկնային վար-  
դապետութիւնը, Պօղոսն էր միայն, որ քրիս-  
տոնէութիւնը հրէութեան սահմանափակ նեղ  
շրջանից հանեց և նրան համաշխարհային կրօ-  
նի կերպարանք տուաւ—և մենք ներկայ ձեռնարկի  
արժէքը նորա մէջ չենք տեսնում: որ միջոց պէտք է տայ  
հ եթ ան ոս ների առաքեալ Պաւուզ ինքն իւր մասին  
լաւ Ճանաչելու ու. բայց գնահատում ենք այն  
իրեւ անհրաժեշտ փորձ մի շատ զդալի պակաս լլ-  
րացնելու: Հեթանոսաց առաքեալը ինքն իւր մասին  
այն կարծիքն է ունեցել: որ նա աւետարանի նկատ-  
մամբ ուրիշ ոչինչ է, բայց եթէ մի հասարակ պաշ-  
տօնեայ, «արուպն առաքելոց» միւս առաքեալների  
շաբթում: և մեզ գուուար է հաստատապէս վճռել,  
արդեօք նա «իրաւամբ էր պարհենում միւսների  
առաջ՝ թէ ինքը միայնակ ամէնից աւելի է գործել»:  
Յամնայն գէպս, երբ նա ասում է, թէ՝ այդ գոր-  
ծողը ես չեմ, «այլ չնորհքն ևստուծոյ որ ընդ իս՝  
լոկ բառեր չեն գոքա կամ կեզ համեստութեան  
արտայայտութիւն, այլ բզիսում են այն ամէն քը-  
րիստոնէի համար անհրաժեշտ համոզմունքից, թէ  
մարդիկ, ուրիմն նաև Պօղոսի նման մեծ մարդը,

գործիք են միայն ևստուծոյ ձեռքին աւետարանի  
սուրբ գործը յառաջ տանելու համար, մինչդեռ  
բուն գործիք հեղինակը և քրիստոնէական եկեղեւ-  
ցոյց, իրբև տիեզերական համայնքի, միակ ճշմարիտ  
հիմնագիրն ինքը Քրիստոս է, թէ ինչ կերպարանք  
կստանար քրիստոնէութիւնն առանց Պօղոսի՝ այդ  
մենք չգիտենք, բայց այնքանը հաւասարեալ գի-  
տենք, որ նա կու չէ չէր չեր գնայ հ ե ու թ ե ա ն  
մէջ, որ կը գտնուենքին, և գտնուել են մարդիկ՝ ըն-  
գունակ նոյնն անելու, ինչ որ Պօղոս, գուցէ միայն  
ուրիշ ձանապարհով. Մենք գիտենք, որ Յովհան-  
նու աւետարանը զրոյը (միւսները չիթշնք)՝ առ  
նուազն նոյնչափ չի շդ է ր հ ա ս կ ո ց ե լ Փրկչի  
երկնային վարդապետութիւնը, որչափ Պօղոս, և  
ամենայն հաւասականութեամբ նոյնչափ և գուցէ  
աւելի խոր աղքեցութիւն է ունեցել իւր անմիջա-  
կան ըրջապատողների վերայ, Եշնու ամենայնիւ ի  
հարկէ Հեթանոսների առաքեալ Պաւոսին պէտք  
է լաւ ձանաշել, բայց այդ ձանօթութիւնը շատ  
աւելի մեծ շափով կարելի է նորա սեպհական  
թղթերից ձեռք բերել, քան «Գործք Առաքելոցց»,  
Աւստի և վերջին գրուածքի համեմատ դասագիրքը  
կազմողը, եթէ կամենում է պահել այն արդարեւ  
ուղիղ սկզբունքը, «որ ամենաընտիր գասագիրքը  
հենց բնագիրն է»՝ պէտք է աչքի առաջ ունենար  
նոյն նպատակը, ինչ որ ունեցել է նորա հեղինա-  
կը: «Գործք Առաքելոցը» բոլոր առաքեալների գոր-  
ծունեութեան նկարագիրը մեզ չէ տալիս, բայց  
արժանի է այդ անուան, որովհետև պարզ և ամ-  
փոփ կերպով ներկայացնում է: թէ ինչպէս Քրիս-  
տոսի աւետարանի քարոզութիւնը կեան-  
քի խորհուրդն է գառնում: նոցա միջոցով տա-  
րածուում հետզհետէ աւելի և աւելի լուգարձակ-  
շրջաններում և համառում մինչև այն ժամանակ-  
ուայ հեթանոս աշխարհի քաջաբական և մտաւոր  
կեանքի կեղրոնը՝ Հոռի: — Պէտք է ցաւել, որ  
Հայր Սահակը շեղուելով միանգամ այս նպատակից,  
ընագրի ընծայած պատմութեան կանոնաւոր ըն-  
թացքի մէջ մոցրել է այնպիսի փոփոխութիւններ:  
որոնք ամենեւին չեն նպաստում գործի յաջողու-  
թեանը: Ոի զեղոււմ ինչպիսին է Անանիայի և  
Սափիրայի վարժունքը՝ կարող էր տեղի ունենալ մի-  
այն այն ժամանակի, երբ համայնքի մէջ սկզբնական  
ողերութիւնը փոքր ինչ պատշում է. ուստի և  
ընագրի հեղինակն ամենայն իրաւամբ այդ պատմու-  
թիւնը աւելի ուշ է զնում: իսկ Հայր Սահակ, ե-  
րկի առաքելոց դէմ եղած հալու պատճանքը միանգամից  
պատմելու համար՝ որին ամեննեն հարկ չկար, ա-  
ռաջ է ձգում և աւելի զգալի է այն աներդապահա-

կութիւնը որ մտնում է պատմութեան ընթացքի մէջ Ստեփաննոսի գէմ եղած հալածակը եթով պացի ներբինու և Կուռնելիոսի գարձից յետոյ թերելու պատճառով: Զէ՞ որ նոյն իսկ այդ հալածանքի առթիւ Երուաղէմի հաւատացեալները ցրուեցան և շրջակայքում քարոզել սկսեցին, քայլ առ քայլ, հրեաներից նախ հրեւթեան յարած օտարներին անցնելով, ինչպիսի մէկն էր եթովզացի ներքինին և ապա բուն իսկ հեթանոսներին, ինչպէս Կուռնելիոս:

Հայր Առհակ մի գեղեցիկ սկզբունքի է հետեւում իւր գասագրերի մէջ իւրաքանչիւր պատմութեան ո. Գրքից մի քանի նշանաւոր խօսքեր կցելով. \* բայց ցաւալի է, որ մանաւանդ այս ձեռնարկի մէջ շատ են այնպիսի վկայութիւններ որոնք դրեմէ ամեննեին առընչութիւն չունին, կամ շատ կողմնակի առընչութիւն պատմած գեղքի հետ պասպէս օր. եր. 12 վերջին երեք վկայութիւնները, Սեր Կարծիրով աւելորդ է նաև նոյն խօսքի թէն շատ խորհրդաւոր լինի այդ խօսքը անթիւ անգամ տեղի կրնելը:

Մի շատ աչքի ընկնող թերութիւն, որի վերայ հեղինակի առանձին ուշադրութիւնը հրաւիրել կը կամենայինք՝ այդ բնագրի անձիշդ, երբեմն բոլորովին սիսալ թարգմանութիւնն է տեղ տեղ նաև ըընագրից գուրս բաներ ասելը: Օր. եր. 11. Պետրոս Անանիայի մօտ չէ գնացել. Անանիային թողնողները ծառաներ չեն. Սափիրան ոչ թէ Պետրոսի մօտ է գալիս, այլ բոլոր հաւատացեալների ժողովատեղին: Եր. 14. ընագրի իմաստն է. «Այն հաւատի զօրութեամբ, որ նորա անուան նկատմամբ մենք ունիք, որպան, որին գուրք տեսնում էք և ճանաչում էք, նորա անունը հաստատութիւնը պարգևեց ձեր ամէնքի առաջ»: Հրեաներին Պետրոս չէր կարող ասել. «այն հաւատը, որ գուրք ունէք գեպի Քըրիստոս: Գործք Շառաք ելոցի մէջ չէ ասած, թէ Ստեփաննոս և իւր ընկերները սարկաւագ կոչուեցան: — Առ հասարակւաւ կը լինէր, որ Արժ. հեղինակը այս թերութիւններից խուսափելու համար յունարէն բնագիրը կամ գոնէ Վայցղեկէրի գեղեցիկ թարգմանութիւնը աչքի առաջ ունենար, իսկ ամրող ձեռնարկի նկատմամբ աւելի նոր և ոչ աշխարհական, այլ հմուտ աստուածաբան մանկավարժների գրաւածքներին հետեւ:

Այս համաստ նկատողութիւններով մեր նը-

պատակն է հարկաւ միայն նպաստել, որ նոր գասագրի յաջորդ տպագրութիւններն ըստ կարելոյն աւելի կատարեալ և նպատակայարմար լինին, ընդունելով միանդամ որ Հայր Սահակի ձեռնարկները մեր մէջ իրենց տեսակից առաջնն են և որ ցանկալի է նոցա որբան կարելի է աւելի շատ տարածուած տեսնել և ւելին գուցէ հարկ կը լինի մեզ ասել, երբ լոյս տեսնէ խոստացուած նիւթի մշակութիւնը»:

Կ. Ա.

Ա. Բ Յ Ա. Խ.

ՆՐԿԱՆՍԻՒԾՑ ՄԱՍԱՐ ԵԳ. ԱՅՐՈՌԻԴՐԱՐԵԱՆՑ.

Բագու. 1895 թ.

«Արցախը» գերապատիւ երկասիրողի մինչ ցարդ լոյս տեսած աշխատասիրութեանց պատկը կարելի է համարել. նա հարուստ է վիճակագրական, պատմական, աշխարհագրական և ազգագրական տեղեկութիւններով: Արցախի մանրամասն քննութիւնը թողնելով ուրիշ ժամանակի, առ այժմ մի փոքրիկ գիտողութիւն կը կամենայինք անել, Երև 25 «Ի. գաւառն, որ ընկած է Պաղկանց գաւառի, Երասխ և Հակարի գետերի, Դիլավայաց և Քերս լեռնաշղթայի հարաւահայեաց լանջերի մէջ, ոտացած է Քերդաձոր, Քերդաձոր բելուհան, Վալաղլաղի ձոր, Վալադարասի անունները, այժմ համարուում է Զարրայէլի գաւառ»: Այն և Երևս 399—401: —Այս պատմական գաւառը որոշելու համար գերապատիւ հեղինակը մատնացոյց է անում Խորենացոյ մատենագրութեան եր. 609: Մովսէս Կաղանկատուացոյ եր. 264 և Գոտզայ վանից արձանագրութեան վրայ, բայց մոռացել է վկայութեան կոչել այս մասին և Սիսական եր. 270:

Արցախի հեղինակը հետեւել է Հ. Ալիշանին Վալադարասին—Քերդաձոր անուանելով:

Սիսականի և Արցախի հեղինակները՝ Վալադարասին—Քերդաձոր մկրտելով հաւատացած են որ հին Արցախի Քերդաձոր գաւառի տեղը գտնել սրոշել են: Գերապատիւ հեղինակ հարց միամտացնելու համար այժմ մատնացոյց անենք Արցախի հին Քերդաձոր գաւառի տեղը, որ գտնուում է Զաւանշիր գաւառի Վաղահաս գիւղի մօտ: և ոչ թէ Զանդեաղուր կամ Զարրայէլ գաւառներում: Արցախ եր. 195—193: Վաղահաս գիւղիս շրջակայքում: Հին Վաղահաս գիւղն գտնուում է նորի հարաւային կողմում, որ ունի ընդգարձակ գիւղատեղի, կիսա-

\* Ժամագրքից բեթելը տես եր. 102: անտեղի է հարկէ: Ժամագրքն էլ ս. Գրքից է առել: